

տիկ՝ տաճկի արձաթի գրամեն աւելի չէ: Ունի նաև ձեռագիր Աւետարան մը, բայց մասնաւոր գեղեցկութիւն մը չունենալէն զատ նաև Ռ.Գ.Ի. (1645) Գործ Իե. թուականը կը կրէ:

ՅՈՒՆ. ԱՆՍՅՐ

ՌԱՅԵՏՐԵԿԱՆ ՄԱՆՔԸՆԻՐԵ

Պատուի Կարգաւորութիւնը: Օտեսայի անդղական ընդհանուր հիւպատոսը Յուլիոս 26ին հետեւեալ տեղեկութիւնը կու տայ: Վերջին ժամանակներս ի Պաթում մնամոնի (Kerosin) գինն առ հարիւր 25 բարձրացաւ եւ միշտ բարձրանալու վրայ է, ի Պաքու այլ չղտուած քարածէթի գինն 100% բարձրացաւ: Այս փոփոխման պատճառը յայնմ է՝ որ ներկայ տարւոյս համար ինդրուած վաճառքն 3,225.806 տակառու չափ կը համարուի, մինչ Պաքուի աղբերց բովանդակ քարածէթն առ առաւելն 1,612.903 տակառու չափ կրնայ համարուիլ: Ի դիպուածի որ նոր Պաքուի շրջանները չգտնուին, հարկաւ քարածէթի պահասութիւնը զգալի պիտի ըլլայ, եւ ասով բնականապէս թէ կասպից ծովու եւ թէ Օտեսայի մէջ ձեռնարկութիւնը կը դադրին, սոյն ձեռնարկութեանց մասնակցութիւնը մեծամեծ կորուստներ կ'ընեն եւ անհամար դործաւորք ալ իրենց ապրուստէն կը զրկուին: Ն'ընտի թէ տերութիւնը միտք ունի արտածուող քարածէթի վրայ մտք դնելու, որ ցայտ վայր մտքեւ ազատ էր: Օրոտոտո Յին անդղական ընդհանուր հիւպատոսն իւր վերջիշեակ խօսքերն հաստատելով՝ կ'ըսէ թէ քարածէթակիր նաւերն, որ Պաթումի վաճառականութեան կը զբաղէին, հիմայ սկսած են ուրիշ վաճառքներ կրել, եւ ի վերջոյ կը յաւելու՝ թէ ասաւ եւ այժմ քարածէթի գինը չի կրնար փոխուիլ:

Ռուսաստանի կողմէ խաբարտուած իրօնաւորութիւնը: Մտտերս կտաւի մշակութեան պարագայը անձինք բեգերստորիկ ժողով մը գումարելով՝ կտաւի խորհարարու իրապիւնելու վրայ խորհրդակցեցան: Թողուկանը յայնմ միտքանեցան՝ որ առաւել կտաւն օտար երկիրներու մէջ ծախելու համար բեգերստորիկ մասնաւոր կենդրոնական սենեակ մը հաստատուի եւ գործադատարաց միջամտութիւնը չընդունուի:

Ռիւսիոյ Կարգաւորութիւնը: Այժմ սկսած է հաւկիթի արտածութիւն ի Ռիկա հսկայաբայլ յառաջանալ, որուն վրայ Leipziger Tagblattը հետեւեալ հետաքրքրական լուրը կու տայ: Վերջին տոններս շարժումս մը մէջ H. Seeligէ վաճա-

ռատունը երկամուրջը 14 կառք, Beckerինը 23 կառք հաւկիթ արտածած են. բայց ասկէ ուրիշ վաճառատուններ ալ բաւական բան մաս մաս դուրս առաքած են: Այս գարնան ընդ ամենն Ռիկայէն գրեթէ 200 երկամուրջը կառք հաւկիթ արտածուած է: Հաւկիթները նախ եւ յառաջ գերմանիա կ'առաքուին, եւ անկէ՝ Անգղիա: Ռիկացի վաճառականք հաւկիթը մեծաւ մասամբ քաղանէն կը գնեն 100ը 30—40 կուպէկի. այս հաւկիթներէն մէկն ի գերմանիա 6, իսկ յԱնգղիա՝ 10 կուպէկ կ'արժէ: Իւրաքանչիւր կառաց մէջ 104 արկղ կը զետեղուի, իսկ ամեն մէկ արկղ 1440 հաւկիթ կը բովանդակէ. ըստ այսմ իւրաքանչիւր կառքով 149.760 հաւկիթ կ'առաքուի: Այս հաշուով ընդ ամենն այս գարնան Ռիկայէն արտածուած է 30 միլիոն հաւկիթէ աւելի:

Ռուսաստանի Կարգաւորութիւնն ու հաւկիթնայ արտածութիւնն որ ըստ օրէ կ'աճի եւ կը զարգանայ: 1881ին 2,848.831 բուպլիտ արժողութեամբ հաւեղէն ու հաւկիթ արտածուեցաւ, 1885ին՝ 6,369.067 բուպլիտ արժողութեամբ, 1887ին՝ 12,539.869 ի արժողութեամբ եւ 1888ին առաջին 9 ամիսները՝ 12,850.000 բուպլիտ արժողութեամբ:

Այս որոշումն հարաւայն Ամերիկոյ բաժնի հանչոյ կ'ընտի թէ 7,300.000 հաւկէն աւելի ըլլայ, 1887ին հունձքն ալ 7 միլիոնէն աւելի էր, իսկ 1886ին հունձքն 7 միլիոնէն շատ քիչ պակաս էր: Ըստ այսմ՝ վերին 3 տարիներու բերքն 21 միլիոն հաւկէ աւելի էր. եւ զարմանալին այն է՝ որ այս անչափ բերքն, որ տարւէ տարի կը բազմանայ, հազիւ կը բաւէ, այնպէս որ ծախուելէն յառաջ կը գործածուի կը սպասուի: Մինչդեռ երկրագործական դործեաց եւ ուտելեաց գիները շատ նուաղած են, բամբակի գինը շատ բարձրացած է: Ամերիկայի բամբակի բերքը վերջին պատերազմէն ի վեր կրկնապատկած է, իսկ աշխարհիս բամբակի գինը երեքպատիկ աճած է, որովհետեւ գերութեան ժամանակ բայց ի Միացեալ-Ղահաններէն տեղ մ'ալ բամբակ չէր մշակուեր: Միւս բամբակաբեր երկիրներու տուած բամբակին քանակութիւնը վերջին տարիներս աճած չէ, ընդհակառակն յԱմերիկա սաստիկ արագութեամբ կը բազմանայ:

Ծառայնի մտաւ: Յայտը ծանօթ չէր, թէ բինայ (pinna) ըստած խեցեմորթն գիմացկուն եւ մետաքսանման ինձը մը կու տայ, որմէ կրնայ գեղեցիկ եւ տոկուն մանաք գործուիլ: Իտալա-

կան թերթ մ'աւոր վայ Տեոեեալ տեղեկու-
 թիւնը կու տայ: Բինան Գիշերկրական ծովու մէջ
 կորացուի: Թեպէս թիւերը շատ փափուկ են՝
 բայց անհարին դժուարութեամբ կ'անտաի խե-
 ցեմորթը ժպտեղեն: Մեռաքսանման փնջիկներն,
 որ 1890 րոնոս կը կորուի, խեցեմորթէն ան-
 շատուելէն ետքն՝ անատով կը լուացորնու: Եե-
 տ շքտ մէջ կէս մը կը շրջուի. անպէտ մա-
 սուներեքը կը կորուի եւ մնացածն ձեռքով
 շփելէն ետքը բոլորովն կը շրջուի, կը յար-
 դարուի եւ կը անտարուի: Այս գործողութեամբ
 անգործ նիւթոյն շրթն երեքը կը փճանայ: Աեր-
 ղին ատոր երկու կամ երեք թիւը՝ մէկ թիւ մե-
 տաքսով կը մնանու: Այս մանուածք կիրորնա-
 խառն ջրով կը լուացուի, ձեռքով կը շփուի եւ
 արդուով կ'որոշուի: Գոյնն եւ գեղնագորշ եւ
 սպիկփայլ եւ պղնձայլ վաճաքներ շինելու կը
 գործածուի: Տարագործութեան այս ծիղին
 կենդանավայրն եւ փայլերնց եւ լուգգայ:

ՅԵՐԱՅԱԿԵՄ

ԽԱՉ ԱՒ ԶԵՓԻՉ

ՎԵՐՋԱՆ ԺՈՐՄԱՆԱԿՆԵՐԸ ՎԵՂ ՄԸ

16. Խաղարկոյթի խը:

(Հարկոյթի խը)

Պատմութիւն ու էր — իրիկուան 9 — բայց
 երկու տիկնայ տոմարներն տեսնելու պէս գահ-
 երէցն ինչպէս՝ որ արտաքայ կարգի ծանր դեպք մը
 հանդիպած էր. ուստի տոմարներն բերով ծառային
 բաւ՝ որ զիրենք ներս հրամայէրէ:

«Այս կ'ըն ուրախութիւն է» ըսաւ գահե-
 րէցն ներս մտնողներն տեսնելու պէս. բայց Տրննա
 իրապէս իր քունտէն երես տեսնելով՝ կեցաւ
 եւ անհանգստութեամբ հարցոյց. «Տիկն, կ'ըն
 հանդիպեցաւ, ձեր անուանոյն դժբախտութիւն մը
 պատահած ըլլայ»:

«Տէր գահերէց, կրկնեց իրապէս, որ ալ
 իր խաղարկութիւնն ծածկէ՛լ չէր կրցած, զարհուրելի
 վիճակի մը մէջ եք, ձեր օգնութիւնն ինչորեքու
 եկանք. զայս բերով ձեռքով երեսը ծածկեց եւ
 ծռնիկ վայր եկաւ:

Գահերիցուն ամա սինն ներս մտաւ եւ ձեռքն
 երկնջընելով — «Միայն Աստուծոյ առջեւ ծուրը
 կը գրուի, ըսաւ. բայց կ'ըն ուրեք»:

«Հայր ու եղբայր անհետացած են, զպա-
 տախանայ Տարրիգաւ, վասն զի մայր խառելու ան-
 կարող էր:

Տան կարօր հակառ թեմ է մը խորշմե-
 ցնելով — «Ահհետացած... կ'ըն բա՛ւ կ'ու-
 գէք. կը յուսամ որ Քիզոյի մէջ մէկը չի կարծեմ

թէ ես թշնամիներս անհետացնելով ազատի ու-
 զեմ անոնց ձեռքէն»:

«Չէ, չէ, Տէր, այդպէս չէ, գուցե յանկարծ
 իրապէս կարծեմով, հետո ըլլայ մեզիկ այս խոր-
 հուրքն. իւր բարեկամներն...»:

«Խորքը չեմ հասկընար. բայց սոք ելէք,
 եւ քիչ մը հանգարտեցէք, ամուսնոյս քով նստե-
 ցէք, մինչեւ որ ես Տարրիգային հետ թափմ». Այն
 փղբոյկ Տարրիգան է, որ գահերէց ըլլալէս յա-
 ուալ ծռնելու տես զայ կը խաղար: Ուրեքն, Տար-
 րիգա, այն ամենուան պէս իրարու հետ խօսիւք,
 Ի՛նչ սիրուն ժամանակներ էին, որ հին ընկերոյն
 տունն կը յանախի... բայց մէկդի թորեք այս
 խաղարկութիւններն. ամուսնի մը առ եւ քով
 նստէ, ինչպէս որ այն ամեններն կ'ընէրը»:

Գահերէցն նստաւ եւ ամուսնի մը մերձեցը-
 նելով՝ ձեռքով նշան ըսաւ Տարրիգային որ նստի:
 «Ո՛հ Տէր, ըսաւ Տարրիգա արուած հրամա-
 նին հետեւելով, այսպէս բարեկոր էք. հայր ու
 եղբայր դարձեալ են կը դարձնէք մեզ, այնպէս
 չէ՛: նոյնպէս եւ...»:

«Խի՞մնէն, ըսաւ գահերէցն ծիծաղելով
 եւ շառագունած աղջկան խօսքն ընդհատեց. ինքն
 ալ անհետացած պիտի ըլլայ, ինչպէս կը լսեմ.
 Բայց արժան եւ իրաւ. ընդզեմ կամոցս ինք զինքն
 այդպիսի վտանգի մը մէջ դրաւ, թի՛ք անտէ որ
 պիտի կարենայ ազատիլ: Բայց հորիւս եթէ՛զ դուռն
 իրեն համար աղաչեա... — քսիկ մը շարժմ յա-
 ուալ հորը հետ խօսած ամենն միջնորդ պիտի ըլ-
 լայի, բայց խօսքն ուրիշ նիւթի վայր գարձաւ եւ
 սկսեց բարձր քաղցրագոտութեան վայր խօսիլ:
 Ի՛նչպէս դարձեալ խաղարկայ խօսքէս. դուռն խօսէ
 եւ մի թողար որ գէք ընդհատեմ: Հայրք ու եղ-
 բայրք ի՛նչ եղան»:

Տարրիգա համառօտի մը խի՞մնէտին անհե-
 տանալուն վայր գիտցածն ըսաւ, եւ նոյն օրուան
 դեպքն ալ կցեց:

Երբ որ գահերէցն լսեց որ հայր ու որդի
 Տր. Բալանային ցացեր են, սկսաւ մտածելով այս
 անունն կրկնել. «Բալանայ, Բալանայ, կարծեմ
 այս առեղծուածական անքը կը ծանոյնաւ: Ի՛նչ
 պիտի ընէին հոն»:

«Չեմ գիտեր, կրկնեց Տարրիգա. բայց անկէ
 Մանգա Մատապէտա փողոցը ցայիկ կուտայ»:

«Բայց, դուստր իմ, այն փողոցին մէջ հայրք
 ինչ գործք ունի. նոյն փողոցին մէջ գրեթէ միայն
 գործավարներ եւ ատորին ամուսին կը բնակին»:

«Բայց փողոցը՝ պատի մէջ հաստատուած
 դրան մ'առջեւ կցեցեր են»:

«Այն տեղի ալ կը ծանոյնաւ, հայն պանդոկ
 մը կայ, ուր ամէն տեսակ ծաղի կը ժպտուի. այն
 հրապարակական զբօսարանն ուր գացին»:

«Կերս մտան եւ մէկ մըն ալ գուռը շէլան»:

«Ե՛րբ»:

«Այսօր կ'ստեղծ քիչ մը յառաւ»:

«Այս ատուա հայրք ծաղի խի՞մնէտին հարցոյց.
 եւ անշուշտ Տր. Բալանային երթալէ խի՞մնէտին
 անհետացան հետ յարաբերութիւնն պիտի ունե-
 նայ: Անշուշտ այս մարդիկ իմ ստոկիւնութեան
 աւելի քան գիտեն այս նկատմամբ»: